Հաստատված է
գծագրի՝ Ն. Գրիգորյան
31.08.2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ II ԴԱՍԱՐԱՆ

Պարսամյան Աննա

2023-2024թ.թ. ուս. տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) I դասարանում սովորում է 25 աշակերտ՝ 11 տղա և 19 աղջիկ: Դասարանում ստեղծվածէ կուռ, համերաշխ կոլեկտիվ:_Աշակերտների մեծ մասը հաճախել է մանկապարտեզ: Որոշ աշակերտներ աչքի են ընկնում իրենց ընդունակություններով, աշխատասեր են, ուշադիր: Կոլեկտիվը իր ներսում կարողանում է լուծել ընկերների առջև ծառացած պարզագույն խնդիրները և այլն:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Աշակերտներին ապահովել դասագրքերով: Ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարել սերտ, համագործակցված, որպեսզի ունենանք դաստիարակված, կրթված սերունդ:_Դասարանի աշակերտների բարձր մակարդակի վրա պահելու համար պահպանել կապը ծնողների հետ, նրանց մշտապես տեղյակ պահել աշակերտների առաջադիմության ու կարգապահության մասին: Բացատրել դպրոցի դերի ու կրթության, դաստիարակության անհրաժեշտության մասին: Ապահովել ծնող-ուսուցիչ կապը: Աշխատանքները կազմակերպել այնպես, որ ծնողները լինեն աջակից դասվարին թե՛ կազմակերպչական,թե՛ ուսումնական-կրթական հարցերում: Որոնել, գտնել, կիրառել դասավանդման համար անհրաժեշտհետաքրքիր, արդյունավետ մեթոդներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն _Աշակերտների դաստիարակել ազգային ոգով: Հայեցի դաստիարակությունը ապահովելու նպատակով մի շարք հայ գործիչների մասին տալ այնպիսի պատկերացումներ, որոնք աշակերտներին կմղեն նմանվել հայ ազգի նվիրյալներին: Բացատրել կրոնականտոների իմաստը:

Գեղագիտական դաստիարակություն _Աշակերտների մոտ ձևավորել գեղեցիկի՝ որպես ներդաշնակության մասին պատկերացումը: Ուղղորդելդեպի այն, որ գեղեցիկը ունի ոչ միայն արտաքին, այլև ներքին կողմ և ներդաշնակությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ գեղեցիկի արտահայտման ներքին և արտաքին կողմերը գտնվում են միասնության մեջ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն__Դաստիարակել քաջություն և արիություն ոչ միայն մարմնում, այլև հոգում: Ձևավորել պայքարի ոգին՝ հայրենիքի միասնականության, անվտանգության ու խաղաղության համար՝ դրա հենքում դնելով համերաշխության սկզբունքը:

Ֆիզիկական դաստիարակություն __Աշակերտներին մասնակից դարձնել սպորտային միջոցառումներին, մրցումներին: Խրախուսել մարզաձևերում աչքի ընկնող աշակերտներին: Խոսել անձնական հիգիենայի մասին:

Աշխատանքային դաստիարակություն __Հետևել դասարանի մաքրությանը, խնամել ծաղիկները: Հարգել ուրիշի աշխատանքը: Ձևավորելաշխատանքային հմտություններ: Աշակերտներին մասնակից դարձնել մանկական ցուցահանդեսներին:

Բնապահպանական դաստիարակություն __Դաստիարակել ուշադիր վերաբերմունք շրջապատող բնության , դպրոցի, սեփական քաղաքի նկատմամբ: Վաղ մանկությունից երեխան նույնպես պարտավոր է պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանման համար:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ_____Ապահովել ծնող-դպրոց կապը: Ծնողական ակտիվ կոլեկտիվին ներգրավել դպրոցական միջոցառումներին: Զրույցներանցկացնել երեխայի օրվա ռեժիմի կազմակերպման մասին

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
1. 04.09-08,09	<<Մենք գնում ենք դպրոց>> Զրույց՝ ինչպե՞ս եմ անցկացրել ամառային արձակուրդները:	դասվար աշակերտ	
2. 11.09-15,09	Սանիտարական կանոնների և մաքրության պահպանումը դասասենյակում:	դասվար աշակերտ	
3. 18.09-22.09	Անկախության օր:Խոսել տոնի և նրա կարևորության մասին	դասվար աշակերտ	
4. 25.09-29.09	Իմ ընկերը: Շարադրություն	դասվար աշակերտ	
5. 02.10-06,10	<< Ուսուցիչ իմ թանկագին>> Բացիկներ և բարեմաղթանքներ	դասվար աշակերտ	

6. 09.10-13.10	<<ՀՀ պետական խորհրդանիշեր>> թեմայով զրույց՝ դրոշ, զինանշան, օրհներգ:	դասվար աշակերտ	

7. 16.10- 20.10	Էկոլոգիական խնդիրները մեր քաղաքում՝ Քաջարանում:	դասվար աշակերտ	
8. 30.10-03.11	<<Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>>: Առաջադրել լուծումներ այդ խնդրին	դասվար աշակերտ	
9. 06.11-10,11	Մեր փոքրիկ բարեկամները՝ կենդանիները: Ընտանի և վայրի կենդանիները: Պաստառի ձևավորում	դասվար աշակերտ	
10. 13.11-17.11	Ես էլ քեզ նման եմ: Ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	դասվար աշակերտ	

11. 20.11-24.11	<<Երթևեկության կանոնները>> Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները:	դասվար աշակերտ	
12. 27.11-01.12	Բնական աղետներ: Ինչպե՞ս վարվել բնական աղետների ժամանակ:	դասվար աշակերտ	
13. 04.12-08.12	<<Կարող եմ օգտակար լինել>>: Աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ	դասվար աշակերտ	
14. 11.12-15.12	Ազգային տոներ: Ներկայացնել ազգային տոների առանձնահատկությունները	դասվար աշակերտ	

15. 18.12-22.12	Շուտով Ամանոր է: Ամանորյա փոքրիկ միջոցառում	դասվար աշակերտ	
16. 22.01-26.01	Եկեղեցին և ազգը Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում:	դասվար աշակերտ	
17. 29.01-02.02	Հայոց բանակի օր: Ճանաչել մերօրյա հերոսներին և նրանց սխրանքները:	դասվար աշակերտ	
18. 05.02-09.02	<<Վատ սովորույթներ>> Զրույց՝ ինչպե՞ս պայքարել վատ սովորույթների դեմ	դասվար աշակերտ	

19. 12.02-16.02	<<Ազնվություն և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում>>	դասվար աշակերտ	
20. 19.02-23.02	<<Գրքի տոն>> Ինչ խորհուրդ ունի միմյանց գիրք նվիրելը	դասվար աշակերտ	
21. 26.02-01.03	Իրավունքներ և պարտականություններ:	դասվար աշակերտ	
22. 04.03-08.03	Մայրության և գեղեցկության տոն: Պատրաստել բացիկներ	դասվար աշակերտ	
23. 11.03-15.03	Բարև ՝զարուն: Քայլել բնույթան գրկում	դասվար աշակերտ	
24. 18.03-22.03	<<Ասացվածքի ամբիոն>> Պաստառի ձևավորում:	դասվար աշակերտ	
25. 01.04-05.04	Ճիշտ սնվելու իմ տարբերակը: Հաղորդաշարի դիտում սննդաբանի կողմից:	դասվար աշակերտ	
26. 08.04-12.04	<< Ծույլ աշակերտը>> մուլտֆիլմի դիտում, քննարկում	դասվար աշակերտ	
27. 15.04-19.04	<<Հանելուկներ>> Հանելուկների ընթերցում, գուշակում	դասվար աշակերտ	
28. 22.04-26.04	<<Հայոց Մեծ Եղեռն>> Զրույց ցեղասպանության մասին:	դասվար աշակերտ	
29. 29.04-03.05	Իմ անունը: Իմ անվան ծագումնաբանական նշանակությունը	դասվար աշակերտ	

30. 06.05-10.05	Ինչ եմ ուզում դառնալ: Շարադրություն	դասվար աշակերտ	
31. 13.05-17.05	Ինչ սովորեցի այս տարվա ընթացքում: Զրույց աշակերտների ձեռքբերումների մասին:	դասվար աշակերտ	
32. 20.05-24.05	Էքսկուրսիա դեպի բնության գիրկ:	աշակերտներ, ծնողներ, դասղեկ	